06/11/2024թ.
ժամը 12:30 թիվ՝ 2

ՄԵԼԻՈՐԱՑԻԱ ՓԲԸ
ՀՀ Արարատի մարզ, գ. Հայանիստ

Արձանագրություն
*ՀՀՏԿԵՆՋԿ-Մ-ԳՀԱՊՁԲ-24/33 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի*

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին՝
**Նախագահ՝ Ա. Իսկանդարյան**
**անդամներ՝ Է. Սարիբեկյան**
**Ս. Մկրտչյան**
**Ն. Ղազարյան**
**Ս. Ղափլանյան**
**քարտուղար՝ Ա. Խաչատրյան**

*ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի /այսուհետև՝ Կարգ/ 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, գնահատող հանձնաժողովի նիստը համարվում է իրավազոր և հայտարարվում է բացված*

**Հայտերի բացման մասին**

Հանձնաժողովի նիստի նախագահ՝ Ա. Իսկանդարյան

1. **Հրավերի պահանջների նկատմամբ մասնակիցների ներկայացրած հայտերի ամբողջական նկարագրերի համապատասխանության մասին.**

1.1 Հայտ է ներկայացվել «Բիգ Փարթս» ՍՊԸ-ի և «ՍԱՆՆԻ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ի կողմից, սակայն ներկայացված հայտերում երկու մասնակիցների կողմից Հավելված 1.1-ը ներկայացված է թերի, մասնավորապես՝ «Բիգ Փարթս» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մոդելը և արտադրողի անվանումը, ինչպես նաև երեք չափաբաժինների տեխնիկական բնութագրերում կոնկրետ նշված չեն չափորոշիչները՝ շահագործվող մասան, շերեփի չափսերը, թողարկման տարեթիվը և այլն: Իսկ «ՍԱՆՆԻ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ի կողմից նույնպես չի ներկայացվել ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մոդելը և արտադրողի անվանումը, ինչպես նաև երեք չափաբաժինների տեխնիկական բնութագրերում կոնկրետ նշված չեն չափորոշիչները՝ շերեփի չափսերը, սլաքի թռիչքը և այլն:

Գնահատող հանձնաժողովը Ղեկավարվելով Կրագի 41-րդ կետի և հրավերի 8.9-րդ կետի դրույթներով անհամապատասխանությունները շտկելու համար «Բիգ Փարթս» ՍՊԸ-ին և «ՍԱՆՆԻ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ին առաջարկվում է՝ ՀՀՏԿԵՆՋԿ-Մ-ԳՀԱՊՁԲ-24/33 ծածկագրով մրցույթի շրջանակներում ներկայացնել տեղեկատվությունը մինչև 08.11.2024թ. ժամը 18:00-ն ներառյալ, էլեկտրոնային փոստին՝ armenkhachattryan@mail.ru ուղարկելու միջոցով ներկայացնել սույն գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին:

Ընդունել որոշում կողմ 5 ***(հինգ)***, դեմ ***0 (զրո)*** ձայներով:

տալ մեկ աշխատանքային օր ՝

**Նախագահ՝ Ա. Իսկանդարյան** ________

**անդամներ՝ Է. Սարիբեկյան** ________

**Ս. Մկրտչյան** ________

**Ն. Ղազարյան** ________

**Ս. Ղափլանյան** ________

**քարտուղար՝ Ա. Խաչատրյան** ________